



ՄԱՏՐԻՑԱ

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՈՐՏՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ

Հերթական համար	Իրավիճակային խնդրի նկարագրությունը	Տվյալ իրավիճակում կիրառելի մեթոդաբանությունը	Հաստատման/Համաձայնեցման մասին նշումներ
1	Պատահար երկու տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) մասնակցությամբ, երկու ճանապարհների հատման վայրում, որոնցից մեկով, որով երթևեկել է ՏՄ1-ը, կահավորված է եղել «Գլխավոր ճանապարհ» ճանապարհային նշանով, իսկ մյուս ճանապարհին, որով երթևեկել է ՏՄ2-ը, որևէ ճանապարհային նշան տեղադրված չի եղել:	ՏՄ2-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄ1-ի վարորդին	<p>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետների կոմիտեի 13.08.2018թ. թիվ 001 որոշմամբ</p> <p>ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 28.08.2018թ. թիվ 50-Լ որոշմամբ</p>
2	Պատահար երկու ՏՄ-ների մասնակցությամբ, երկու ճանապարհների հատման վայրում, որը կահավորված է եղել լուսացուցով: Տրանսպորտային միջոցներից մեկը լուսացուցի՝ ճանապարհային երթևեկության կանոններով տվյալ իրավիճակի համար թույլատրելի լույսի ազդեցության տակ խաչմերուկ մուտք գործած և խաչմերուկը ազատող տրանսպորտային միջոցն է (ՏՄ1), մյուսը՝ լուսացուցի կարմիր լույսից կանաչ լույս փոխվելու, երթևեկություն վերսկսող, խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցը (ՏՄ2):	ՏՄ2-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄ1-ի վարորդին	<p>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետների կոմիտեի 20.01.2020թ. թիվ 1 արձանագրությամբ</p> <p>ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 01.02.2020թ. թիվ 2-Լ որոշմամբ</p>
3	Պատահար երկու ՏՄ-ների մասնակցությամբ, երկու ճանապարհների հատման վայրում, որտեղ երթևեկությունը լուսացուցերով չի կարգավորվում (Ներառյալ՝ առկա լուսացուցները չեն աշխատում), նշված ճանապարհներն ունեն միևնույն ծածկույթը: Տրանսպորտային միջոցներից մեկի (ՏՄ1) երթևեկության ուղղության վրա որևէ կարգավորող ճանապարհային նշան առկա չէ, իսկ նրա աջ կողմից խաչմերուկ մուտք գործող տրանսպորտային միջոցի (ՏՄ2) ուղղության վրա տեղադրված է 2.4 «Զիջեք ճանապարհը» կամ 2.5 «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» ճանապարհային նշանը:	ՏՄ2-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄ1-ի վարորդին	<p>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետների կոմիտեի 20.01.2020թ. թիվ 1 արձանագրությամբ</p> <p>ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 01.02.2020թ. թիվ 2-Լ որոշմամբ</p>
...			